ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<--->> փետրվարի 2012թ. N ___ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N1800-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին>> N356-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-4 հավելվածների։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 6-ի N 957-Ն որոշման հիման վրա Երևան քաղաքի Ուլնեցի - Ռուբինյանց փողոցների միջև <<Հարավկովկասյան երկաթուղի>> փակ բաժնետիրական ընկերության կողմից ապամոնտաժվել է 2.5 կմ երկարությամբ երկաթուղային գիծ՝ ավտոճանապարհ կառուցելու նպատակով:

<<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի կողմից կազմվել է ճանապարհի նախագիծ, որի առաջին փուլը՝ մոտ 2.5 կմ երկարությամբ, Ուլնեցու փողոցը կապում է Ռուբինյանց փողոցին՝ բեռնաթափելով Դ. Անհաղթ, Ռուբինյանց փողոցների, Ռուբինյանց - Պ. Սևակ փողոցների խաչմերուկի երթևեկությունը, ապահովում է մոտեցում այդ ճանապարհին կից նախկինում վաճառված հողամասերի համար: Հետագայում՝ հաջորդ փուլերով, ճանապարհը հասնելու է մինչև Ազատության պողոտա, Հ. Քոչար փողոց և Կոմիտաս պողոտա, ինչպես նաև ճանապարհային հանգույց ուղեանցներով, որը 1-ին փուլում կառուցված ճանապարհահատվածը Ռուբինյանց փողոցի վերջնամասում կկապի դեպի Նոր Նորք և Ավան վարչական շրջաններ տանող ճանապարհների հետ: Արդյունքում ճանապարհի կառուցումից հետո նրան կից առաջանում են որոշակի ազատ հողատարածքներ՝ շուրջ 1.4 հա մակերեսով, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել բնակելի տներ և հասարակական նշանակության օբյեկտներ կառուցելու նպատակով, որի կապակցությամբ ներդրումային ծրագիր է ներկայացրել <<Դորոժնիկ>> ՍՊԸ–ն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի <<Երևան քաղաքում ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրի մասին>> N1800-Ա որոշման համաձայն՝ <<Դորոժնիկ>> ՍՊԸ–ն սեփական ուժերով և միջոցներով իրականացնում է ճանապարհի 1-ին փուլի՝ շուրջ 2.5 կմ երկարությամբ հատվածի շինարարությունը՝ Ուլնեցու փողոցից մինչև Ռուբինյանց փողոց (առանց ուղեանցերի և ճանապարհային հանգույցների), ինչպես նաև վճարում այդ փուլի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, տեխնիկական և հեղինակային

հսկողության ծառայությունների արժեքները, որը կազմում է մոտ 850,000.0 հազար դրամ, ինչպես նաև տեղափոխում հողամասերի միջով անցնող 320 մմ տրամագծով գազատար խողովակը:

Դրա դիմաց Երևանի քաղաքապետարանն ընկերությանն ուղղակի վաճառքի ձևով հատկացնում է նշված ճանապարհին կից առաջացող շուրջ 1.4 հա մակերեսով հողատարածքը, որի շուկայական միջին գինը շուրջ 560,000.0 հազար դրամ է: Այսինքն ընկերությունը պատրաստակամություն է հայտնել Ուլնեցի–Ռուբինյանց փողոցների կառուցման 850,000.0 հազար դրամ նախահաշվային արժեքի շինարարությունն իրականացնել 560,000.0 հազար դրամով:

Նշված ծրագրի ֆինանսական ձևակերպումներն ապահովելու նպատակով նախագծով նախատեսվում է 560,000.0 հազար դրամի չափով ավելացնել հողի իրացումից մուտքերը և նույն գումարի չափով հիշյալ ճանապարհը կառուցելու համար ծախսերը:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<<Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**-**	**-**	**-**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**-**	**-**	**-**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**560,000.0**	**-**	**560,000.0**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	560,000.0	-	560,000.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***	**(560,000.0)**	**-**	**(560,000.0)**
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(560,000.0)	-	(560,000.0)

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**-**	**-**	**-**
	այդ թվում՝				
5000	**Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	x	**560,000.0**	**-**	**560,000.0**
	այդ թվում՝				
5100	**1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**	x	**560,000.0**	**-**	**560,000.0**
	այդ թվում՝				
5110	***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ***	x	552,000.0	-	552,000.0
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	552,000.0	-	552,000.0
5130	***ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	8,000.0	-	8,000.0
	որից՝				
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	8,000.0	-	8,000.0
6000	**Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ**	x	**(560,000.0)**	**-**	**(560,000.0)**
	այդ թվում՝				
6400	**ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝**	x	(560,000.0)	-	(560,000.0)
	այդ թվում՝				
6410	*ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8411	(560,000.0)	-	(560,000.0)

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-	-	-
2400	**04**	**0**	**0**	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		-	-	-
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**560,000.0**	-	**560,000.0**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		560,000.0	-	560,000.0
				այդ թվում՝				
				12. Ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագիր		***560,000.0***	-	***560,000.0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	552,000.0	-	552,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	8,000.0	-	8,000.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***		**(560,000.0)**	-	**(560,000.0)**
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(560,000.0)	-	(560,000.0)
				այդ թվում՝				
				5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր		***(560,000.0)***	-	***(560,000.0)***
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(560,000.0)	-	(560,000.0)

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**-**	**-**	**-**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**-**	**-**	**-**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**560,000.0**	**-**	**560,000.0**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		560,000.0	-	560,000.0
				այդ թվում՝				
				12. Ավտոճանապարհի կառուցելու ներդրումային ծրագիր		***560,000.0***	***-***	***560,000.0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	552,000.0	-	552,000.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	8,000.0	-	8,000.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***		**(560,000.0)**	**-**	**(560,000.0)**
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(560,000.0)	-	(560,000.0)
				այդ թվում՝				
				5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր		***(560,000.0)***	***-***	***(560,000.0)***
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(560,000.0)	-	(560,000.0)